

Պայմանագրի առարկան

Subject of the contract

Սույն փաստաթուղթը հանրահանում է Պայմանագիր՝ կնքված կողմերի միջև, որով Հայփոստ ՓԲԸ-ն /այսուհետ Հայփոստ/ պարտավորվում է ստորև ներկայացված պայմաններով Հաճախորդին մատուցել Փոստային անվանական արկղի տրամադրման և սպասարկման ծառայություններ, իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց և կատարել ստորև ներկայացրած պայմաններով իր այլ պարտավորությունները:

This document is considered to be the Contract signed between the Parties, according to which Haypost CJSC /hereinafter Haypost/ undertakes to provide the Client with services of Postal Nominal Box provision and servicing and the Client undertakes to make payment for the provided services and to fulfill other commitments according to the belowmentioned conditions:

Ծառայությունների մատուցման պայմաններն ու ժամկետները

Terms and conditions of provision of the services

- Հայփոստը պարտավորվում է Փոստային անվանական արկղի հասցեով ստացված առաքանիները բաժանմունքում ստացման օրը տեղադրել պահարանում:
- Հայփոստը պարտավորվում է պահպանել ստացվող առաքանիների անվտանգությունը և չբացել փոստային անվանական արկղը Հաճախորդի բացակայությամբ, բացառությամբ սույն պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերի:
- Եթե Փոստային անվանական արկղի հասցեով ստացվել է այնպիսի փոստային առաքանի, որը հնարավոր չէ տեղադրել Փոստային անվանական արկղում, ապա նույն օրը փոստային բաժանմունքի պատասխանատու աշխատակիցը փոստային անվանական արկղում տեղադրում է համապատասխան ծանուցում մեկն փոստային առաքանի ստացված լինելու վերաբերյալ, որում նշվում են փոստային առաքանու վավերապայմանները, իսկ փոստային առաքանին պահվում է փոստային բաժանմունքում: Նման փոստային առաքանիները տրամադրվում են Հաճախորդին՝ վերջինիս պահանջով (փոստային բաժանմունք ներկայանալու օրը):
- Եթե փոստային անվանական արկղի հասցեով ստացվել է Փոստային դրամական փոխանցում, ապա նույն օրը փոստային բաժանմունքի պատասխանատու աշխատակիցը փոստային անվանական արկղում տեղադրում է դրամական փոխանցման վերաբերյալ համապատասխան ծանուցում՝ որում նշվում են դրամական փոխանցման վավերապայմանները: Դրամական փոխանցումները տրամադրվում են Հաճախորդին՝ վերջինիս պահանջով (փոստային բաժանմունք ներկայանալու օրը):
- Մինչև սույն Պայմանագրի գործողության ժամկետի լրանալը Հաճախորդը ծանուցվում է առ այն, որ անհրաժեշտ է ներկայանալ փոստային բաժանմունք և կատարել Պայմանագրի լուծման կամ վերակնքման հետ կապված սույն Պայմանագրով նախատեսված գործողությունները:
- Պայմանագրի չվերակնքման և Պայմանագիրը լուծելու դեպքում Հաճախորդը պարտավոր է ներկայանալ փոստային բաժանմունք, ստանալ փոստային անվանական արկղի հասցեով ստացված փոստային առաքանիները և հանձնել փոստային անվանական պահարանի բանալին:
- Եթե Հաճախորդը ցանկանում է վերակնքել Պայմանագիրը, ապա Հայփոստի ծանուցումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում պարտավոր է սույն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստով կամ հեռախոսի միջոցով /010-514610/ ծանուցել Հայփոստին Պայմանագրի վերակնքման վերաբերյալ:
- Պայմանագրի վերակնքման համար Հաճախորդը պարտավոր է կատարել հետևյալ գործողությունները՝
 - լրացնել համապատասխան դիմումը,
 - Հայփոստի համապատասխան փոստային բաժանմունքում կատարել կանխիկ վճարում կամ հետևյալ բանկային հաշվին - **h/h 1930003703150800 Կոնվերսբանկ ՓԲԸ** - փոխանցել ներկայացված սակագներին և Պայմանագրի վերակնքման ժամկետին համապատասխան դրամական միջոցներ և փոխանցման փաստաթուղթը դիմումի հետ միասին ներկայացնել համապատասխան փոստային բաժանմունք:
- Այն դեպքերում, երբ Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո ծանուցված Հաճախորդը չի ներկայանում փոստային բաժանմունք և չի ստանում Փոստային անվանական արկղում առկա և/կամ փոստային անվանական արկղի հասցեով ստացված ու փոստային բաժանմունքում պահվող փոստային առաքանիները և/կամ դրամական միջոցները, ինչպես նաև սույն Պայմանագրով սահմանված կարգով առաջարկ չի ներկայացնում Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ, ապա նշված փոստային առաքանիները դասակարգվում են որպես չպահանջված փոստային առաքանիներ, իսկ դրամական միջոցները՝ որպես չպահանջված դրամական միջոցներ, և դրանց նկատմամբ կիրառվում են չպահանջված փոստային առաքանիների և դրամական միջոցների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները:
- Սույն Պայմանագրով նախատեսված փոստային ծառայությունների (փոստային առաքանիների ընդունումը և այլն) մատուցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և Հայփոստի գործունեության նկատմամբ կիրառելի այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում և պայմաններով:

- Haypost undertakes to place the postal items addressed to the Postal Nominal Box into the box on the same day the letters are accepted by the Post Office,
- Haypost undertakes to keep security of the received postal items and not to open the Postal Nominal Box when the Client is absent except the cases defined by this Contract and the Law.
- If there is a postal item received to the address of the Postal Nominal Box which is impossible to place into the box, on the same day the respective employee places a notice into the box about such kind of postal item which contains the requisites of the postal item and the postal item is stored at the Post Office. Such kind of postal items are handed over to the Client upon the request of the latter/ the day the Client arrives to the Post Office/.
- If there is a postal money order received to the address of the Postal Nominal Box, on the same day the respective employee places a notice into the box about the money order which contains information on the received money order. The money order is handed over to the Client upon the request of the latter/the day the Client arrives to the Post Office/.
- Before this Contract is expired the Client is informed on necessity to arrive to the Post Office and fulfil the proceedings related to termination or renewal of this Contract.
- In case of rescission of the Contract The Client is obliged to arrive to the Post Office to receive the postal items addressed to the Postal Nominal Box and hand over the key from the Postal Nominal Box.
- If the Client is going to renew the Contract he/she must inform Haypost about it via E-mail or telephone number **/010-514610/** indicated in this Contract within 3/three/ days after the notice is forwarded from Haypost.
- For prolongation of the Contract the following procedures are required by the Client:
 - Fill in the respective application form,
 - Transfer the respective money funds to the following bank account of Haypost - **a/c 1930003703150800 Conversebank CJSC** - in accordance with the presented tariffs and renewal term of this Contract and submit to the respective Post Office the transfer receipt and the application form.
- In cases when the informed Client does not arrive to the Post Office and does not receive the postal items and/or Money funds available in the Postal Nominal Box and/or received to the address of the Postal Nominal Box and stored at the Post Office and does not present suggestion related to the prolongation of the term of this Contract according to the order determined by this Contract so the mentioned postal items and Money funds are classified as unrequired and conditions defined by the RA Legislation apply to unrequired postal items and Money funds.
- Provision of postal services /accepting of postal items, etc./ provided by this Contract is implemented according to the RA Legislation, RA International contracts, the order and conditions defined by other legal acts operated for the activities of Haypost.

Գաղտնիություն

Privacy

- Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում Հայփոստը պարտավորվում է ապահովել Հաճախորդի փոստային ծառայություններից օգտվելու գաղտնիության իրավունքը համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության և այլ իրավական ակտերի.
- Հայփոստը պարտավորվում է որևէ ձևով երրորդ անձանց չհայտնել և այլ կերպով չիրադարձել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները (բնակության հասցե, գտնվելու վայր և այլն), բացառությամբ օրենքով սահմանված կարգով նշված տեղեկատվության տրամադրման Հայփոստի պարտավորության դեպքերի.
- Հաճախորդը պարտավորվում է չիրապարակել սույն պայմանագրով ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ չճշտված և ոչ հավաստի այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել Հայփոստի համբավին և հանգեցնել սպառողների մոտ Հայփոստի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ոչ հավաստի կարծիքի ձևավորմանը:

- During provision of the services provided by this Contract Haypost undertakes to ensure the Client's right of privacy of using postal services pursuant to the current Legislation of RA and other legal acts.
- Haypost undertakes not to disclose to the third persons and not to promulgate otherwise the possessed data on the Client /address, location, etc./ except the information defined by the Law that Haypost is obliged to provide with.
- The Client undertakes not to promulgate incorrect information on the process of provision of the services defined by this Contract which could damage Haypost's reputation and bring to wrong consideration of the consumers about the services provided by Haypost.

